Պատահական չպետք է համարել այն, որ նրա հրամանով է արտագրվել 972 թվականին Բարսեղ Կեսարացու «Յաղագս ճգնաւորաց» գրքի թարգմանությունը։

Այս երեք առաջնորդների օրով է կառուցվել Սանահնի Ամենափրկիչ եկեղեցին, որ վանքի գլխավոր տաճարն է հանդիսանում, և այս առաջին երեք վանահայրերն են, որ Սանահնում կազմակերպել են միաբանությունը և հիմնադրել վանքը։

979 թվականին Անիի Սմբատ Տիեզերակալ թագավորն այցելության է եկել Սանահին և այնտեղ եղած ժամանակ արքայական հատուկ հրովարտակով Սանահնի վանքը դարձրել է Լոռի-Տաշիրքի հոգևոր կենտրոն և այնտեղ հիմնադրել է եպիսկոպոսություն՝

Նկ. 18. Զաքարյանների տոհմական տապանատունը հս ամ կողմից։

հատկացնելով նրան ընդարձակ վիճակ՝ Վրաստանի սահմանից սկսած մինչև Նիգ և Շիրակ գավառները։

Այդ Հրովարտակից իմանում ենք, որ Սմբատ Տիեզերակալի հայրը և մայրը՝ Աշոտ Ողորմածն ու նրա կին Խոսրովանուշ թագուհին, Սանահնի վանքը հիմնարկելու միջոցին բազմաթիվ գյուղեր և կալվածքներ են նվիրել վանքին՝ նրա միաբանության գոյության համար տնտեսական հիմք ստեղծելու նպատակով։ Այդ բոլորից հետո Սմբատը հայոց Խաչիկ կաթողիկոսի միջոցով Սանահնի վանահայր Եսայիին Տաշիրքի եպիսկոպոս է ձեռնադրել։

Հրովարտակի պատճենի տակ, «Քոթուկի» մեջ հետևյալ դիտողությունն է գրված նույն գրչի ձեռքով.

«Ի սոյն աւրինակաւս Դաւիթ թագաւորն և Դէոսկորոս կաթողիկոսն և Միքայէլ կաթողիկոսն կարգեալ և հաստատեալ ի գէլ արարեալ են, որ կայ հաստատուն, անխափան»[1]։

Վիմական արձանագրություններից երևում է, որ Եսային երկար ժամանակ է եղել

[1] Այս հրովարտակը «Քոթուկից» արտագրել և հրատարակել է Ջալալյանցն իր «Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան» գրքի առաջին մասում, էջ 43—44։ Այդ հրովարտակը հիմք է ծառայել նույնիսկ 19-րդ դարի առաջին կեսին Սանահնի վիճակը վերականգնելուն, ինչպես այդ մասին վկայում է Ջալալյանցն իր գրքի 45 էջում. «Այս վիճակ ժամանակ առ ժամանակ նորոգեցաւ և հաստատեցաւ յաւուրս մեր»։ Հրովարտակը Ջալալյանցից արտագրել է ամբողջությամբ Ղևոնդ վ. Մովսեսյանցը, որը հիմք է համարում Տաշիրքի թագավորության հիմնադրմանը։ Տե՛ս նրա «Լոռիի Կիւրիկեան թագաւորներու պատմութիւնը», էջ 24։